

ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ ՏԵՇԵԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Ի ծովագրիտակ պապան Ը անողիւանայ
Հառաւալս մ :

Ի՞րեժոն եւսն քարակոշկոճ ծուփք յորձանաց ծովածուկ
Ով միրայօն և ձիւնավարս ալիք յաւէրժ շառաչուկք,
Ով յանհանգիստ յովկիական յահեղամուռնչ հառաչանս
Ի իւրաբերան ժամէ ՚ի ժամ զարթուցանեք արձագանս
Ի խորափոր խարակս և խիթըս դարափանց Աէն-Ալլյ ,
Ինդ սոսկալի գոշմանդ մրցմանց փանդունահար ձայն տալլյ ,
Արդ զի տապանըն տիրասպաս առեալ զաւանդ իւր տըխուր՝
Օ անձուկ որմոցն ունայնութիւն ելից անուամբն հանրապուր ,
Օ եռանդնաշարժ մինչ արձակեք վակժոյժ խուժանդ ալեւէտ
Լոյտ ըզկուտով զիրաբելով դէմ տապանիդ ծովադէտ ,
Արոտալլյս և ինձ կացէք հառաչանացըս պատկառ ,
Ար վազվազեալ ծըփինածայր ընդ մըկանունքդ՝ հայ բարբառ
Դամ յետնոյ Ամօրիկեայց և Բրիտոնաց քաջ Իարդին
Օ իմ և զիմոց մեծ հայրենեաց զողջոյն ձօնել ըզյետին .
Ի իսկ Իարդից և Դըրուիդաց հայր՝ հինաւուրցն Այրարատ .
Ար մինչ հազար ազգ զանց չառնէ զգաղթականաւ հարազատ ,
Աշ ոչ որչափ և բազմամթեր կացցէ զնովլաւ ցուրտ բիւրեղ
Ինըզգայ ընդ այս կորուստ՝ նա կարծիցի կալ ըզքմեղ :
Ը աթոպրիան հանձար ըընիկ , ստեղծիչ ոգի սքանչելեաց ,
Արեզ յերկնահուան , յոր մոտք հասեր , ես ՚ի ծայրիցն այն Ասեաց
Օ որ ստընկայ նախկին զրեցեր դու նինջաբեր զըւարթնոյն ² ,
Օ յաւերժական կարդամ հանգիստ իմաստնաձեմ քում գլխոյն .
Ինմահութեան հերիք հնչեաց համբաւ հըզօր քոյդ անուան .
Դզոյն համբաւ քե ձարտաբեալ քեզոյն դիտեմ ու՚ի մահուան :
(Ն թէ ունկանդ քերդողալսուր քաղցր հնչէ միշտ քան ըզքնար
Ինչուն ծովու մոլեալ մըռունչ կոհակաշարժ իւր ՚ի լար՝
Արոց բազում զու յաշխուժից տիս մատուցեր լըսելիս ,
Ինսանձելեաւ երբ հուրբ ձաղկեալ գնայիր օտար ընդ ալիս
Ազնացեալս լըքեալ աշխարհ , նորոց ՚ի նորս ՚ի ինդիր ,
Օ ելիկոնեայ մուսայս ՚ի պրակը Աաշէսաց ածեալ հիո .
Արեթ մաղձաւոր յեղափոխեալ զանձին քո դէմ ՚ի Հուենէս ,
Արեթ յերկնընծայ կուսին տարփող և վկայակից յԱւդորէս ,
Ի թափառիկ և տարաբաղդ մերթ ՚ի վայրագըն փեսայ
Անապատի փթթեցելց փափուկ վարդին Ատալայ ,

¹ Ըաթոպրիան գաղղացի անմահ մատենագիրը (որուն կարդալու և գիտանի վալքը յունիս ամսոյն թերթին մէջ համառօտեցինք) կենդանութեանը ատեն պատրաստեր էր իր գերեզմանը Սէն-Մալլ ըսուած քաղաքը՝ ուր ինքը ծնած էր . աս քաղաքը Աարտն անունով պղտիկ կղզւոյն մէջ բարձր ժայռի մը վրայ չլինած է , ու շատ բնական և գեղեցիկ տեսարաններ ունի : Ըաթոպրիան ան ժայռին ծովեցերեայ մէկ կառըին վրայ պատրաստել տուեր էր իր պարզ ու անշարժ գերեզմանը , և հոն թաղուեցաւ :

² Վկայք (Les Martyres) Հագներդ . Իգ :


Եւ մերթ 'ի սեպ կոչակակոծ կուսաստանին առընթեր
 Ինդ Դմելեայ զգիշերավար ծովն յուզելով լուսնայեռ .
 Յաճախ ապախտ զհայրականաւ քով արարեալ բարբառով՝
 Ռզնժգեհից վերապատուեր ձայնս , քանզի էր քեզ գորով :
 Ռըդ նոյնս և ես պանդուխտ և գամ սիրայրդոր ընդ ալիս
 Հառաւ մի լուռ մեռեալ , զոր մահդ յարուցանէ 'ի սրտիս .
 Մանուկ երբեմն և ես՝ անհուպ՝ որոճայի զքոյին կիրս ,
 Մինչ քաղցրանայր ինձ դարձադարձ ըզհրաշագիծդ առնել գիրս .
 Յայնժամ ընդ խանդ քո և ընդ սիրտ և ընդ իմաստք սիրացեալ՝
 Օ այս հառաջանս երկնեցի , այսքան ամս 'ի յիս գոլ մըռայլ ,
 Ար այժմը թունդ առեալ վազեալ , Ը աթուպրիան , դառնայ քեզ
 Ուաւալելով ընդ քո և իմ ախորժ ծրփանց ասպարէզ :
 Կին էին երազայոյս և իմ քերթուածք նազելիք .
 Եւ ոյր չիցեն եռանդնալից մըտաց՝ ոսկեակ ապառնիք .
 Բայց չե 'ի կէս լեալ հասակի՝ ահա բոլոր վերացաւ .
 Շմարտութիւն ատեայ զզընորս ցորչափ բարդի ամաց խաւ ,
 Այլ տակաւին ընդ արևմուտը հասակին ոսկեթոյր
 Աք կաթոզի ձգտին խնդրեն ըզվառիվառ թեոց սոյր ,
 Ո'ինչև անկեալ ակօսաբեկ դաշտաց այտից վարդաձոյլ
 Եւ ցիր ընդ ցիր խուսեն գլխոյն հովանախիտք գեղահոյլ .
 Բզգայ՝ անդարձ մահկանացուացըս վիճակեալ ըզգարուն ,
 Պնդարձ , աւաղ , և եղանակն այն աշխուժից իւր սիրուն :
 Այլ քեզ բաղդ մեծ , քերդող ծնանել , նոյն կէտալ և նոյն առնուլ քուն ,
 Օ էրկին կազմել իւր կայս , զերկիր՝ յարձան , լալիս՝ զծովն անհուն :
 Հորչափ ծոցն այն ծրփանուտ զեռայ շարժի ինքնայոյզ
 Ողջունեսցի տապանդ 'ի քէն ձեռակերտեալ բաջայոյս ,
 Եւ զուարձասցի հոգիդ յիշեալ քերթողական զիւր կենցաղ
 Բան ըզժըխոր բաղաքական որ լոկ էած քեզ զըմբաղ .
 Ոչ գաւազան քեզ Ո'ինովայ , ոչ ի կորգեան տըւաւ բաստ
 Այլ գահոյք գերափառիցըն քաջերգուաց 'ի յերաստ ,
 Բեզ ով մեծ , որ գիտացեր զազատագնաց բան յահուր
 Եներդաշնակ արկեալ 'ի լուծ մրցել լարից փափկալուր .
 Օ ի ոչ կերտեալ կիսպար և ոչ աղիք ըզսիրտ ոլորեն ,
 Նափ և կըշիռ քերից տառից ըըմոգէ զունկն երգօրէն ,
 Ուէ ոչ սիրտ 'ի մատն իթեալ անշունչ նիւթոց տայ ոգի ,
 Աիրտ որ ստեղծու , սիրտ որ ըզգայ , սիրտ որ խօսի Ճշգակի :
 Բեզ որ զափիւն հրախանդ ազգիդ մուծեր 'ի նոր Ճեմարան ,
 Ծուռփք ծովափին և քեզ տըւան հուսկ քնարանիդ որորան
 Օ էրդ սիրելեաց քոց անլուսից՝ յոնիականն Արգահօր
 Եւ Որովենայն ողբերգակի զիինկալ , զիսկար և զլաղմոր :
 Բարբառք Բարդիդ ծովածաւալք երկնաթըռիչք և ջերմին
 Յանմարդաձայն յանբռնադատ յամայութեան անդ խորին՝
 Հորչափ կըռուին կարկառակոյտք ընդ լոյծ տարերն ասպարէզ
 Յամեհամուղ շաշման միջոյ ելցեն ահեղք սիրակէզ .
 Լամդակոծեալըն համբակաց 'ի ստեղծաբան ծով անծայր
 Ը աթուպրիան , անշարժ շիրիմդ իցէ լապտեր բոցածայր .
 Լաւաց փոխան անդ մրցականս և խորտակեալըս քընարս ,
 Ո'նդ անըսպառ քերթողութիւն՝ Ճեմեցուսցէ զծովամարս :

() ն , անզր ընդ բիւր հարեալ ընդ քար և ընդ կոհակ սարսռասեր
Երթիցէ և այս հառաւ գերեզմանիդ առջնիթեր ,
Հանապազօր ընդ ծովածին հրոսակս հարուլ բեկանել ,
Հանապազօր և յարուցեալ ըզնոյն նուագաց առնուլ թել :
Այսպէս դու կեաս . այսպէս լուծցին վրեժք մանկութեանս խաբանցուկ՝
Ար յամենայն բարեացն այսպոյնս ինձ եթող ձայնս հառաջուկ :



ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՄԱՆՑՈՒԹԻՒՆ

Ը էրամ :



Ը երևա որդը թրթուրի ու թիթէոնիկի տեսակներէն մէկն է՝ ամենուն ծանօթ : Ի չա աս պատկերին մէջ կը տեսնուի թրթուրին ու թիթէոնիկին ձեւը . թիթէոնիկներուն մէկը (այսինքն A) արու է , մէկալը (B) էդ :



Ի այս հնգկաստան ուրիշ տեսակ մըն ալ կայ որ մեր շերամէն ալ ազնիւ մետաքս կուտայ՝ և ահա անզր թրթուրը , թիթէոնիկն ու բժոժը :

Դոս աս օգտակար միջատը գարմանելու խիստ հարկաւոր գիտելիքները միայն ամփոփենք՝ տեղնիտեզը տեղեկութիւն առնել ու զողները խրկելով ան գեղեցիկ Վետաքսաբանութեան որ ազնիւ հակոբ աղա Առաջիկեան ուսումնասեր և ազգասեր պարոնը հրատարակեց տպագրութեամբ Առատանդնուպօլիս 1846թ :

Ը էրամոց :

Ը երևա ՆՈՑԸ պէտք է ըլլայ բարձր ու հովթը բիուկ տեղ , գլխաւոր գիրքը դէպ ՚ի արեւելք կամ արեւմուտք , և գոնէններս պղտիկ գաւիթ մը , որ զրսի հովք շխտակ ներս չպարնե՝ դուռը բացուած առենք : Ը երամնոցին դրսի տեսքը ասանկ կրնայ ըլլալ .